ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2025թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ Հ.23/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԿԱՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՏԱՇԱՏԻ ԽՃՈՒՂՈՒ Հ.63 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ Կարեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Գ. Նժդեհի փողոցի հ.23/4 հասցեում, տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 300.0քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.04032021-01-0158 վկայական/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Արտաշատի խճուղու հ.63 հասցեում, /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.08082025-01-0058 վկայական/ տարածագնահատման 12-րդ գոտում գտնվող 1063.83քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ Հ.23/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԿԱՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՏԱՇԱՏԻ ԽՃՈՒՂՈՒ Հ.63 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով առաջարկվում է Կարեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Գ.Նժդեհի փողոցի հ.23/4 հասցեում, Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 300.0քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.04032021-01-0158 վկայական/ փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Արտաշատի խճուղու հ.63 հասցեում՝ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.08082025-01-0058 վկայական/ տարածագնահատման 12-րդ գոտում գտնվող 1063.83քմ մակերեսով հողամասի հետ:

Հողամասերի փոխանակության անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ քաղաքացուն պատկանող հողամասը Շենգավիթ վարչական շրջանի գոտևորման նախագծի համաձայն 2009 թվականի դեկտեմբերից ներառվել է բնակչության հանգստի համար նախատեսված տարածքի /պուրակ/ գոտում և այն ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում ինչով պայմանավորված քննարկվող հողամասում հասարակական նշանակության շինության կառուցման նախագծման թույլտվություն ստանալու դիմումը մերժվել է և քաղաքացու խնդրանքը հնարավոր չի եղել բավարարել՝ ՀՀ կառավարության 19.03.2015թ. հ.596-Ն որոշմամբ հաստատված կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետով:

Մասնագիտական որակավորում ունեցող «ՖԵՌԵ» ՍՊ ընկերության կողմից տրամադրած եզրակացության համաձայն՝ Գ.Նժդեհի փողոցի հ.23/4 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Կարեն Սահակյանին պատկանող և Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Արտաշատի խճուղու հ.63 հասցեում՝ գտնվող հողամասերի շուկայական արժեքները կազմում են 75.000.000 ՀՀ դրամ:

Համաձայն հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման

արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ